**Արձանագրություն N 3**
**ՋԿ-ԳՀԾՁԲ-22/2-Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի**
**գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 05 Մայիսի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Ալեյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ն. Ավետյանը և Գ. Մելիքսեթյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

**Բանակցությունների վերաբերյալ**

---

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Արարատի մարզի Արաքսավան և Բուրաստան համայնքների Արաքս գետի N16-ից մինչև N14 սահմանների միջակայքում Արաքս գետի նախկին հունի վերականգման և N16 սահմանանշանի մոտակայքում Արաքս գետի հայկական կողմի մոտ 130 մ երկարությամբ և 8 մ խորությամբ ողողված պատնեշի վերականգնման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԾՁԲ-22/2-Ն ծածկագրով ընթացակարգի 05.05.2022թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած գնի նվազեցման շուրջ բանակցություններին մասնակցում էր «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Առաքելյանը:

Գնահատող հանձնաժողովի նախագահ Կ. Ալեյանը բանակցությունների մասնակիցներին ներկայացրեց «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկը:

Բանակցությունների ավարտին մասնակից «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվեց 19 980 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) նախկին 48 000 000 ՀՀ դրամի (ներառյալ ԱԱՀ) փոխարեն:

**Հանձնաժողովի որոշումը**

---

Հիմք ընդունելով բանակցությունների արդյունքները հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-22/2-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ին,

2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԾՁԲ-22/2-Ն ծածկագրով ընթացակարգի համար անգործության ժամկետ չի սահմանվում:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելուց հետո չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ՋԿ-ԳՀԾՁԲ-22/2-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ | | Կ. Ալեյան |
| անդամներ | | Ն. Ավետյան |
| | | Գ. Մելիքսեթյան |
| Քարտուղար | | Ա. Սարգսյան |